## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2019 թ-ի մարտի 25-ին, ժամը 11-ին Դաշտաքար համայնքում տեղի ունեցավ ավագանու թիվ 2 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը
Նիստը նախագահում էր համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյանը

Օրակարգում՝

1. Օրակարգը հաստատելու մասին հարցը
2. Դաշտաքար համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմ ստեղծելու մասին և 17.10.2012թ-ի <<Խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 29 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

*(Զեկ՝ Ն. Մալխասյան)*

1. Լսեցին նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը.

*(Զեկ՝ Ն. Մալխասյան)*

Արտահայտվեցին ավագանու անդամներ Աբրահամ Աբրահամյանը, Արմեն Աթոյանը և Արամ Մալխասյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները, որոնք իրենց խոսքում պաշտպանեցին համայնքի ղեկավարի առաջարկությունը
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով
Դաշտաքարի ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 5

Հաստատել 18.03.2019 թվականի ավագանու նիստի օրակարգը.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

2.Լսեցին--- 2019թ-ի Դաշտաքար համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմ ստեղծելու մասին և 17.10.2012թ-ի <<Խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 29 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

(զեկ Ն. Մալխասյան)

*Ղեկավարվելով ՀՀ կառավարության կողմից 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված <<խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 4-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի>> 109-րդ հոդվածի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով*

ավագանին որոշեց.

## ՈՐՈՇՈՒՄ 6

Ստեղծել Խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով հետևյալ կազմով

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Վարդանյան | աշխ. քարտուղար |
| Քարտուղար՝ | Է. Ղազարյան | համայնքի ղեկավարի տեղակալ |
| Անդամներ՝ | Ա. Սարգսյան | ավագանի |
| | Ն. Հակոբյան | ուսուցչուհի |
| | Դ. Պիլիպոսյան | ոստիկան |

Համայնքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառման աշխատանքներում պատասխանատու նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Վարդանյանին:

2. Ուժը կորցրած ճանաչել 17.10.2012 թվականի <<Խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 29 որոշումը:

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնագյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

Ավարտելով հաստատված օրակարգի հարցերի քննարկումները՝ համայնքի ղեկավարը հանդես եկավ հայտարարությամբ և նիստը հայտարարեց փակված:

Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյան

Աշխ.քարտուղար ՝ Ա. Վարդանյան